

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ (VII դասարան)

ՄԱՍ I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ (1-15)

Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4-ական տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը:

1. Ո՞ր թիվը պետք է գումարել $9\frac{2}{5}$ -ին, որպեսզի ստացվի -5 ,
1) $\frac{1}{35}$ 2) $\frac{5}{37}$ 3) $\frac{2}{35}$ 4) $-14\frac{2}{5}$
2. Գտե՛ք ամենափոքր հնգանիշ թվի և ամենամեծ եռանիշ թվի տարբերությունը:
1) 1098 2) 1001 3) 901 4) 9001
3. m -ի ի՞նչ արժեքի դեպքում է $(9 - 2m)$ արտահայտության արժեքը 10-ով փոքր է $(9m - 3)$ արտահայտության արժեքից:
1) $\frac{2}{11}$ 2) 2 3) -2 4) $\frac{93}{29}$
4. Ինչքանով է 27 սմ 38 սմ-ը մեծ 1381 սմ-ից:
1) 13 սմ 50 սմ 2) 13 սմ 57 սմ 3) 12 սմ 50 սմ 4) 10 սմ 50 սմ
5. 5 ց 7 կգ մեկ տոննայի ո՞ր մասն է կազմում:
1) $\frac{57}{100}$ 2) $\frac{570}{1000}$ 3) $\frac{57}{1000}$ 4) $\frac{507}{1000}$
6. Ո՞ր թվանշանով է վերջանում 5-ի բաժանվող գույգ թիվը:
1) 6 2) 0 3) 5 4) 2
7. Գտե՛ք իրար հաջորդող այն երկու բնական թվերը, որոնց գումարը հավասար է 43-ի:
1) 20; 21 2) 21; 22 3) 25; 26 4) 22; 23

8. Գտնեք 20-ից փոքր բոլոր գույգ թվերի գումարը:

- 1) 90 2) 45 3) 80 4) 100

9.

Քանի տոկոսով կփոքրանա քառակուսու մակերեսը, եթե նրա կողմը փոքրացնենք 20 %-ով:

- 1) 10 2) 20 3) 36 4) 40

10.

Ունենք 72 կգ պղնձի և 8 կգ արծաթի համաձուլվածք: Քանի տոկոս է արծաթը այդ համաձուլվածքում:

- 1) 80 2) 20 3) 90 4) 10

(11-12) Գտնել արտահայտության արժեքը.

11.

$$\frac{\left(25\frac{1}{3} + 4\frac{8}{9}\right) : \frac{5}{6}}{\left(7 + 3\frac{1}{6}\right) \cdot 9\frac{3}{5}}$$

- 1) 1 2) $\frac{68}{183}$ 3) $\frac{57}{100}$ 4) $\frac{20}{3}$

12. $|b| - |a|$, եթե $a = -1\frac{1}{2}$, $b = \frac{1}{2}$

- 1) 2 2) 0 3) 0,5 4) -1

(13-15) Հավասարումներ և անհավասարումներ:

13. $3 \cdot (x + 4) = 18$,

- 1) 2 2) 3 3) 1 4) -1

14. $-4\frac{1}{5}x + \frac{1}{5} = \frac{17}{25} - x$

- 1) $\frac{13}{20}$ 2) $-\frac{3}{20}$ 3) $\frac{2}{35}$ 4) $\frac{2}{5}$

15. Ուր բնական թվերն են $3 < x \leq 7$ անհավասարման լուծումները:

1) 3;4;5;6;

2) 4;5;6;

3) 3;4;5;6;7

4) 4;5;6;7

ՄԱՍ II. Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ (16-20)

(16-20) *Առաջադրանքների կատարման համար յուրաքանչյուր առաջադրանքներից հետո պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքը՝ նշված տեղում:*

16.

Եռանկյան պարագիծը 84 սմ է: Գտեք նրա կողմերի երկարությունները, եթե նրանք համեմատական են 7, 9, 12 թվերին:

17. Նավակը գետի հոսանքին հակառակ ուղղությամբ 30 կմ ճանապարհը՝ 2 ժամում, իսկ հոսանքի ուղղությամբ 100 կմ ճանապարհն անցնում է 4 ժամում: 30 կմ ճանապարհը լաստը քանի՞ ժամում կարող է անցնել:

18.

Մի բանվորը, աշխատելով մենակ, կարող է ավարտել տրված աշխատանքը 9 օրում, իսկ մյուսը՝ 12 օրում: Միասին աշխատելով՝ աշխատանքի ռի մասը կկատարեն բանվորները 1 օրում:

(19-20) Նույն արտադրողականությամբ աշխատող 2 օպերատոր 2 օրում մուտքագրում են

80 էջ:

19. Քանի՞ էջ է մուտքագրում 6 օպերատորը 6 օրում:

20. Քանի՞ օպերատորը կարող է 400 էջը մուտքագրել 4 օրում: